իրագործումն ու արևմտահայ գործերի ղեկավարությունը։ Բիւրօի անդամներ ընտրեցին Վահ. Փափազեանը, Արտ. Դարբինեանը, Յ. Տէր-Զաքարեանը, Կ. Սասունին և Հ. Գալիկեանը։ Հետզհետէ գրաւած վայրերի և Անդրկովկասի զանազան կենտրոններում կազմեցին Արևմտահայ Բիւրոյի մասնաճիւղեր, որոնք դարձան արևմտահայութեան իրական ներկայացուցիչները։ Մի տեսակ արտահողային պետութիւն էր ստեղծւում՝ կենտրոնական և տեղական իշխանութիւններով։ Ապագային, երբ Թիւրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդէն պատրաստ էր։

Բիւրօին յաջողւեց համախմբել դաղթականների օգնութեան գործով զբաղւող մարմիններն ևս — Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութեան Կոմիտէն, Կենտրոնական Նպաստամատոյցը և այլն, որոնց գործունէութիւնը կենտրոնացւեց և դրւեց ընդհանուր հակակշռի տակ։ Այս մարմինները ահագին ծառայութիւն մատուցին արևմտահայ ժողովրդին։